

## ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԿՐԱՆԸ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ Է

Բահայի Հավատը համաշխարհային կրոն է, որի նպատակն է բոլոր ռասաներն ու ժողովուրդները համախմբել միասնական համընդհանուր գործում և մի Հավատում: Բահայիները Բահաուլլայի հետևորդներն են, Ով, ինչպես իրենք հավատում են, բոլոր ժամանակների Ավետյացն է: Գրեթե բոլոր ժողովուրդների մարգարեությունները ասում են այն մասին, որ ապագայում երկրի վրա կլինեն խաղաղություն և ներդաշնակություն, և մարդկությունը երջանիկ կապրի:

Բահայիները հավատում ենք, որ խոստացված ժամը եկել է, և որ հենց Բահաուլլան է այն մեծ Անձնավորությունը, Ուն ուսմունքները թույլ կտան մարդկությանը նոր աշխարհ կառուցել: Իր Սուրբ Գրքերում Բահաուլլան ասում է.

*Տերն ամբողջ աշխարհի բարձրագույն սպեղանի և առավել հզոր ապաքինման միջոց է ընտրել դրա բոլոր ժողովուրդների միությունը մի համընդհանուր Գործում, միասնական Հավատում:*

Ահա թե ինչ է ասում Բահաուլլան Աստու և Նրա հետ մեր փոխհարաբերությունների մասին: Բահաուլլան սովորեցնում է, որ Աստված Իր Էությանը անճանաչելի է: Դա նշանակում է, որ մենք չպետք է փորձենք ստեղծել Աստու մտովի պատկերը՝ պատկերացնելով Նրան, օրինակ, մարդու պատկերով: Ընդհանրապես, ակընհայտ է, որ արարման ուժի մեջ չէ հասկանալ իր արարչին: Օրինակ՝ սեղանը չի կարող հասկանալ այդ սեղանը սարքող հյուսնի բնույթը: Հյուսնի գոյությունը բոլորովին անըմբռնելի է նրա սարքած առարկաների համար:

Աստված ամենի և ամեն ինչի Արարիչն է: Նա ստեղծեց երկինքն ու երկիրը լեռներով ու հարթավայրերով, անապատներով ու ծովերով, գետերով, մարգագետիններով ու անտառներով: Աստված ստեղծեց կենդանիներին ու արարեց մարդուն: Պատճառը, թե ինչու Աստված ստեղծեց մեզ բոլորիս՝ Նրա սերն է մեզ նկատմամբ: Բահաուլլան այսպես է ասում այդ մասին.

*ՐՎ մարդու որդի, ես սիրեցի քո արարչագործությանը, ըստ այսմ և ես ստեղծեցի քեզ, այսպիսով սիրիր ինձ, որպեսզի հիշեմ ես անունը քո, և կյանքի հոգով լցնեմ քո հոգին:*

Այսպիսով, թեև Աստծո գոյությունը մեր հասկացողությունից վեր է, Նրա սերը անդադար կերպով տոգորում է հենց մեզ և մեր ճակատագրին: Հասնում է այն մեզ Նրա Հավիտենական Կտակի միջոցով:

Համաձայն այդ Կտակի՝ Աստված մեզ երբեք չի զրկում Իր խնամքից և մշտական ընծայում է մեզ ղեկավարություն: Ամեն անգամ, երբ մարդկությունը հեռանում է Նրանից և մոռանում Նրա Ուսմունքները, գալիս է Աստծու Հայտնությունը և բացահայտում մեզ Նրա Կամքն ու Նպատակը:

«Հայտնություն» խոսքը ենթադրում է, որ մեզ համար այդ երևան է հանվում ինչ-որ բան, որի մասին մենք չէինք իմացել նախկինում: Աստվածահայտնությունները այն հատուկ եություններն են, որ Աստծո խոսքն ու Նրա Կամքն են երևան հանում մարդկության համար, ուստի պատասխանելով Նրանց կանչին, մենք պատասխանում ենք Աստծո կանչին:

«Հայտնության» կոնցեպցիան ավելի լավ հասկանալու համար, որի մասին ասում է Բահաուլլան, մեկը կարող է նյութական աշխարհից օրինակ հիշել: Այս աշխարհում ջերմության և լույսի աղբյուրն արևն է. առանց դրա մեր մոլորակի վրա կյանք չէր լինի: Բայց ինքը՝ արևը չի իջնում երկրագնդի վրա, իսկ եթե մենք փորձենք մոտենալ դրան, կայրվենք:

Բայց եթե պատկերացնենք մեզ, որ մենք վերցնում ենք լավ ողորկված հայելին և ուղղում այն Արևի վրա: Հայելում մենք կտեսնենք Արևի պատկերը և որքան ավելի կատարյալ է հայելին, այնքան ավելի ճշգրիտ կլինի արտացոլումը: Աստծու Հայտնությունները նման են կատարյալ Հայելիների, որոնք արտացոլում են Աստվածային Լույսն իր ամբողջ փայլով: Եվ այդ բոլոր Հայելիներն արտացոլում են նույն Լույսը: Չնայած Աստված մեզ համար անհասանելի է, Նա ժամանակ առ ժամանակ մեզ մոտ է ուղարկում այդ կատարյալ էակներին, որպեսզի Նրանք մեր մեջ ապրեն որոշ ժամանակ, տան մեզ ղեկավարություն և լցնեն մեզ եռանդով, որում մենք կարիք ունենք նյութական և հոգևոր առաջընթացի համար:

Ովանք դաստիարակվել ես համաձայն Աստծու Ուսմունքների՝ երկու հազար տարի առաջ մարդկությանն ուղարկված Նրա՝ Քրիստոսի Հայտնության միջոցով, Ուն դիրքն է Աստծու Որդի: Այժմ հնարավորություն կա իմանալ այլ Հայտնության՝ Բահաուլլայի մասին, Ուն անունը նշանակում է Աստծու Փառք: Քանի որ Նրանք երկուսն էլ Աստծու Հայտնություններն են, Նրանց Ուսմունքները լիովին համաձայնեցվում են իրար միջև, սակայն Բահաուլլայի Ուսմունքները նվիրված են մարդկության արդիական խնդիրներին: Եթե մեկը հիշի թե ինչպիսի վիճակում է այսօր մարդկությունը նա կարող է համաձայնվել, որ մարդկությունը նոր Աստվածային Հայտնության սաստիկ կարիք ունի: Ահա թե ինչ է ասում Բահաուլլան այն ժամանակի մասին, որում մենք ապրում ենք.

*Այս է Օրը, երբ Աստծու ամենասքանչելի ընծաները զեղված են մարդկանց վրա, Օրը, երբ Նրա ամենագորովոր վերին օգնությունը լցրել է ամբողջ արարվածը: Աշխարհի բոլոր ժողովուրդները պետք է հաշտեցնեն իրենց երկպառակությունները և կատարյալ միասնության և խաղաղության մեջ կենան Նրա խնամքի ու բարեհաճության Ծառի հովանու ներքո:*

Բահաուլլայի Ուսմունքների հաջորդ մասը վերաբերում է Բահայի Հավատի նպատակին՝ մարդկության համախմբմանը: Բահաուլլայի Ուսմունքներում ասված է, որ մենք բոլորս մի ծառի պտուղներ ենք ու մի ճյուղի տերևներ: Չնայած մենք տարբերվում ենք իրարից ֆիզիկապես և հուզականությամբ, չնայած մենք ունենք տարբեր տաղանդներ և ընդունակություններ, մենք բոլորս, այնուամենայնիվ, ծագում ենք մի արմատից. մենք բոլորս պատկանում ենք միակ մարդկային ընտանիքին:

Մարդկությունը կարելի է համեմատել վիթխարի այգու հետ, որտեղ աճում են տարբեր ձևի, բուրմունքի և գույնի բազմաթիվ ծաղիկներ: Այգու հմայքը հենց այդ բազմազանության մեջ է: Մենք չպետք է մեր մեջ գոյություն ունեցող ֆիզիկական կերպարի, խառնվածքի, դաստիարակության, մտքերի և կարծիքների տարբերություններին թույլ տանք դառնալ բախումների և թշնամության աղբյուր: Մենք պետք է մարդկային ռասայի բոլոր ներկայացուցիչներին դիտենք որպես սքանչելի ծաղիկներ՝ աճող մարդկության այգում և ուրախանանք պատկանելիությանն այդ այգուն: Չնայած մարդկության միասնությունը անհերքելի փաստ է, երկրագնդի ժողովուրդները դեռ հեռու են այդ վիճակից և նրանց համախմբելը դժվար կլինի: Երբ մեկը որոշում է միանալ Բահայի համայնքին, ապա նա միավորում է իր ջանքերը մյուսների ջանքերին, որոնք աշխատում են կառուցել և պահպանել այդ միասնությունը<sup>1</sup>: Բահայիները մշտապես ջանում են իրենց բոլոր մտքերն ու գործողությունները համաձայնության բերել մարդկության միասնության գաղափարի հետ: Բահայի Հավատի սուրբ Գրքերում ասված է, որ եթե մեզ այցելի պատերազմի մասին միտքը, մենք անմիջապես պետք է այն փոխարինենք խաղաղության մասին ավելի հզոր մտքով: Եթե մեր սրտում ծնվում է ատելությունը, պետք է անմիջապես այն փոխարինել սիրո զգացումով: Մենք պետք է բոլոր ուժերը գործադրենք, որպեսզի ազատվենք նախապաշարմունքներից: Ռասայի, մաշկի գույնի, ազգության, մշակույթի, կրոնի և սեռի վերաբերյալ նախապաշարմունքները ստեղծում են ամենահզոր խոչընդոտը լավագույն աշխարհի ստեղծման ճանապարհին:

Բահայի Հավատի սուրբ Գրքերում շատ է ասվում այն մասին, թե ինչպես հետևել միասնության ուղիով և օգնել ուրիշներին կանգնել այդ ուղու վրա: Օրինակ՝ մի անգամ Աբդուլ-Բահան՝ Ում մասին կհիշատակվի այստեղ ավելի ուշ, արտասանեց այսպիսի խոսքեր.

*Բահաուլլան գծել է միասնության շրջանը, Նա ստեղծել է ժողովուրդների համախմբման պլան՝ երազելով բոլորին հավաքել համաշխարհային միասնության վրանի հովանու ներքո: Դա Աստվածային Առատածեռնության արարում է, և մենք բոլորս պետք է ձգտենք դրան ամբողջ սրտով ու հոգով, մինչև միասնությունը դառնա իրականություն մեր մեջ: Շարժվելով այդ ճանապարհով՝ մենք կստանանք նոր ուժ:*

Բահաուլլան ծնվել է 1817թ. Թեհրանում՝ Իրանի մայրաքաղաքում: Վաղ մանկությունից Նրա մեջ կարելի էր նկատել վեհության նշաններ: Նա ստացավ որոշ տնային կրթություն, բայց դպրոց չգնաց, որովհետև Աստված Նրան օժտեց ներքին գիտելիքով: Բահաուլլան ազնվական ընտանիքից էր, և երբ Նա դեռ երիտասարդ տղա էր, Նրան թագավորի պալատում պաշտոն առաջարկեցին: Սակայն Բահաուլլան հրաժարվեց, քանի որ ցանկանում էր նվիրել Իր ամբողջ ժամանակը ճնշվածներին, աղքատներին և հիվանդներին օգնելով՝ հաստատելով արդարության գործը:

Հատկապես արժանի է հիշատակել Բահաուլլայի կյանքի երկու տեսակետների մասին: Առաջինը՝ դա այն տառապանքներն են, որոնք Նա կրել է և երկրորդը՝ ազդեցությունը, որը Նա թողնում էր մարդկանց սրտերի և մտքերի վրա: Իրականում, հենց այդպիսին են բոլոր Աստվածային Հայտնությունների գծերը:

Բահաուլլայի տառապանքները սկսվեցին այն բանից հետո, երբ Նա սկսեց հռչակել Աստծու Գործը: Նրան հետապնդում էին, աքսորում, բանտարկում: Սկզբից Նրան շղթայեցին Թեհրանի մռայլ և նողկալի բանտում: Չորս անգամ Նրան աքսորեցին մի տեղից մյուսը, մինչև, վերջապես, Նա ընկավ Օսմանյան կայսրության Աքքա քաղաք-բանտ:

Այնտեղ այնքան շատ էին Բահաուլլայի տանջանքները, որ Նա Աքքան անվանում էր «Մեծագույն բանտ»: Նրա Հուշատախտակներից մեկում կան այսպիսի խոսքեր.

*Հիշիր Իմ օրերի մասին քո օրերում, հիշիր Իմ վշտի և աքսորի մասին այս հեռավոր բանտում: Անսասան եղիր Իմ հանդեպ քո սիրո մեջ, անգամ եթե թշնամիների սրերը անձրևի պես լցվեն քո վրա և քո դեմ բարձրանան երկիրն ու երկինքը:*

Ահա թե ինչ է ասում Բահաուլլան իր տառապանքների մասին.

*Նախահավիտենական Պեղեցկությունը թույլ տվեց իրեն շղթայել, որպեսզի մարդկությունն ազատվի իր կապանքներից, համաձայնեց դառնալ կալանավոր այս ամենահզոր Ամրոցում, որպեսզի ամբողջ աշխարհը ձեռք բերի իսկական ազատություն: Նա մինչև վերջ խմեց տխրության գավաթը, որպեսզի երկրագնդի բոլոր ժողովուրդները ձեռք բերեն հավերժ ուրախություն և լցվեն բերկրանքով: Այս է ձեր Կարեկից, Ամենատղորմած Տիրոջ ողորմածությունից: Մենք համաձայնեցինք նվաստանալ, ո՛վ Աստվածային Միասնության հավատացողներ, որպեսզի դուք կարողանաք վեհանալ և կրեցինք բազմաթիվ դժվարություններ, որպեսզի դուք լինեք բարեկեցիկ և բարգավաճ: Ահա նա, Ով եկավ նոր աշխարհի կառուցելու. տեսեք, թե ինչպես նրանք, ովքեր հորինեցին Աստծու բարեկամներ, ստիպեցին Նրան մնալ քաղաքներից ամենալքվածում:*

Երկու հզորագույն տիրակալներ՝ Իրանի շահը և Օսմանյան կայսրության սուլթանն իրենց բոլոր ուժերով հակազդում էին Բահաուլլային և Նրա Ուսմունքներին: Սակայն ճշմարտության Լույսը հեշտ չէ հանգցնել: Ջուրը, որով այն փորձում են հանգցնել, դառնում է յուղ և սնում այդ կրակը, որն ավելի ու ավելի վառ է դառնում: Ոչինչ չէր կարող կանգնեցնել Բահաուլլայի աճող ազդեցությունը: Որքան հեռու էին իշխանությունները քշում Նրան, այնքան ավելի մեծ քանակությամբ մարդկանց էր գրավում Նրա Ուսմունքը: Նրանք ընդունում էին Նրա Իշխանությունն ու Մեծությունը: Չնայած մշտական հետապնդումներին, Բահաուլլան շարունակում էր բացահայտել Աստծու Խոսքը, և իր առաքելության քառասուն տարիների ընթացքում նա այս աշխարհի այնքան սեր ու հոգևոր եռանդ բերեց, որ Նրա Գործի վերջնական հաղթանակն արդեն կասկած չի առաջացնում:

Բահաուլլան հեռացավ այս աշխարհից 1892թ.: Նրա վերջին հանգրվանը, որը Բահայիները համարում են Երկրագնդի ամենասուրբ վայրը, Աքքա քաղաքի մոտ է:

Բահաուլլայի Առաքելությունը հռչակելուց մի քանի տարի առաջ Աստված ուղարկեց հատուկ Դեսպանորդի, որպեսզի հռչակի Նրա գալուստը: Այդ մեծ Դեսպանորդն ընդունեց «Բաբ» անունը, որ նշանակում է «դարպասներ»: Եվ իսկապես, նա դարպաս էր, որ տանում էր դեպի Աստծու ճանաչում և նոր դարաշրջան մարդկության գոյության մեջ: Վեց տարիների ընթացքում նա մշտապես ազդարարում էր մարդկանց, որ նոր Աստվածահայտնության գալուստը մոտ է և նախապատրաստում էր Նրա ճանապարհը: Նա մարդկանց ասում էր, որ նրանք ներկա են նոր Դարաշրջանի, Աստվածային Ավետյաց Օրվա արշալույսին: Նա կոչում էր նրանց մաքրել իրենց սրտերն աշխարհիկ

ունայնությունից, որպեսզի նրանք կարողանան ճանաչել Նրան, Ում Աստված շուտով կհայտնի:

Հարյուրավոր մարդիկ ընդունեցին Բաբի Ուղերձը և հետևեցին Նրան: Սակայն Իրանի կառավարությունը, ժողովրդին տիրող հզոր հոգևորականությունը ըմբոստացան Նրա դեմ: Նրա հետևորդներն օրենքից դուրս ճանաչվեցին, և շատերը մահապատժի ենթարկվեցին: Ինքը՝ Բաբը 31 տարեկանում կառավարության հրամանով հրապարակայնորեն գնդակահարվեց քաղաքային հրապարակում զինվորների ջոկատի կողմից:

Հետևյալ երկու աղոթքները որոնք հայտնած են Բաբի կողմից թույլ են տալիս զգալ, թե որքան խորաթափանց էին Նրա խոսքերը,

*Կա՞ արդյոք դժվարությունները հեռացնող որևէ մեկը Աստծուց բացի, ասա փառավոր եղիցի Աստված: Նա է Աստվածն. բոլորը Նրա ծառաներն են, և բոլորը ենթակա են Նրա հրամանին:*

*Ասա. Աստված օժտում է ամենքին և ամենից ավելի բարձր է, ոչինչ բացի Աստծուց չի օժտի ոչ երկնքում, ոչ էլ երկրի վրա: Արդարև Նա Յուր մեջ Իմացող, Ուժ Շնորհող, Ամենագոր է:*

Շատ բահայիններ անգիր գիտեն այս աղոթքները, հատկապես առաջինը և արտասանում են դրանք դժվար պահերին բարձրաձայն կամ մտքում և այս աղոթքները շատ հեշտ են հիշվում:

Բաբի տանջալից մահից հետո Նրա համախոհները Նրա աճյունը տեղից տեղ էին տեղափոխում, որպեսզի այն չընկնի Նրա թշնամիների ձեռքը: Վերջապես, այն հանգստություն գտավ Սուրբ Հոգիի Հայֆա քաղաքի Կարմել լեռան գերեզմանատանը:

Այսօր այդ երկու քաղաքները Բահայի հավատի համաշխարհային վարչական և հոգևոր կենտրոններն են՝ այդ երկու քաղաքները գտնվում են նույն ծոցի տարբեր ափերի վրա: Հոգևոր, որովհետև այնտեղ են գտնվում Բաբի և Բահաուլլայի Սուրբ Աճյուններն, ինչպես նաև շատ այլ Սուրբ Վայրեր, իսկ վարչական՝ որովհետև այնտեղ՝ նույնպես Կարմել լեռան վրա գտնվում է Հավատի մարմնի գերագույն կառավարչի՝ Արդարության Համաշխարհային Տան նստավայրը:

Բահայիների ամբողջ կյանքը կառավարում է այն միտքը, որ նրանք Բահաուլլայի հետ կտակ ենք կնքել: Ինչպես մենք գիտենք, բոլոր կրոններում Աստծու Հայտնության հեռանալուց հետո Նրա հետևորդները սկսեցին վիճել իրար մեջ, ինչի արդյունքում

կրոնները բաժանվեցին հարյուրավոր և հազարավոր աղանդների: Երբեմն այդպիսի պառակտման պատճառն էր առաջնորդության ձգտումն առանձին անձնավորությունների կողմից: Բայց անգամ, երբ բաժանվում էին ամենաանկեղծ հավատացյալների կարծիքներն այն մասին, թե ինչ են նշանակում Աստծու հայտնության խոսքերը, չկար ոչ մի հեղինակավոր դեմք՝ նշանակված հենց Աստծու Հայտնությամբ, որ կարողանար հարթեցնել այդ տարածայնությունները, և դա խորացնում էր բախումներն ու բաժանումը: Յուրաքանչյուր մեկնաբանումից ծագում էր նոր աղանդ:

Բահաուլլան պաշտպանեց Իր Հավատն այդպիսի պառակտումից՝ ներշնչելով դրա մեջ հատուկ ուժ՝ Կտակի ուժ: Իր մահից առաջ Նա ամենապարզ կերպով, գրավոր հռչակեց, որ Իրենից հետո բոլոր հավատացյալները պետք է դիմեն Աբդուլ-Բահային: Աբդուլ-Բահան՝ Բահաուլլայի ավագ Որդին, Նրա կողմից անվանվեց Նրա Խոսքի միակ Մեկնաբանիչ և Նրա Կտակի Կենտրոնակետ: Նա դաստիարակվել է Բահաուլլայի կողմից, դեռ երեխա հասակում ընդունել է Նրա դիրքը և Իր Հոր հետ կիսել է Նրա բոլոր տառապանքները: Մարդկության համար Նա դարձավ Բահաուլլայի ամենաթանկարժեք ընծան, բահայիների համար Կատարյալ օրինակ:

Աբդուլ-Բահան այս երկրի վրա ապրեց 77 տարի: Նա ծնվեց այն նույն օրը, երբ Բաբը հռչակեց Իր Առաքելության մասին և մահացավ 1921 թ. նոյեմբերին:

Նրա կյանքը լի էր դժվարություններով, սակայն յուրաքանչյուր Նրան այցելողին Նա տալիս էր մեծագույն երջանկության և ուրախության զգացում: Աբդուլ-Բահայի Հոր գնալուց հետո Նրա ուսերին ընկավ պատասխանատվությունը բահայի համայնքի համար, և Նա աշխատում էր օր ու գիշեր հանուն Հավատի տարածման արևմուտքում և արևելքում: Աբդուլ-Բահան գրեց հազարավոր հուշատախտակներ՝ հասցեագրված ինչպես առանձին մարդկանց, այնպես էլ մարդկանց խմբերին, որտեղ Նա բացատրում էր Իր Հոր Ուսմունքները: Նրա մեկնաբանությունները կազմում են Բահայի Հավատի Սուրբ Գրքերի անբաժանելի մասը:

Համախմբվելով Աբդուլ-Բահայի շուրջ՝ որպես Կտակի Կենտրոնակետ, ամբողջ աշխարհում բահայիները մնում են միասնական՝ հավատի սկզբունքների համաձայն ապրելու և նոր քաղաքակրթություն կառուցելու իրենց ջանքերում: Մենք մշտապես հիշում ենք, որ Բահաուլլային տված մեր խոստումի մի մասն է՝ սիրել միմյանց, իսկ Աբդուլ-Բահայի մեջ տեսնել Կատարյալ օրինակ, Ով սիրում էր բոլորին: Մենք հիշում ենք, որ պետք է արդար լինենք, պետք է առատաձեռն լինենք, չնկատենք ուրիշների զանցանքները: Եվ Աբդուլ-Բահայի օրինակով մենք սովորում ենք այդ արդարությունը, առատաձեռնությունը և ներումը: Եվ ամենակարևորը՝ համախմբվելով Աբդուլ-Բահայի շուրջ՝ մենք մշտապես հիշում ենք Բահաուլլայի հետ մեր կտակի մասին՝ որ մենք չպետք է թույլ տանք քայքայել Նրա հետևորդների միասնությունը և որ լինելով համախմբված

համաշխարհային համայնք՝ մենք պետք է մշտապես աշխատենք հանուն մարդկության միասնության հաստատման:

Իր Վերջին Կամքում ու Կտակում Աբդուլ-Քահան Գան նշանակեց Իբեն փոխարինող՝ Չավատի Պահապան անվանելով Իր ավագ թոռանը՝ Շոդի Էֆենդուն:

Այսպիսով, Շոդի Էֆենդին դարձավ Ուսմունքների միակ իրավագոր մեկնաբանիչ: 36 տարվա ընթացքում նա շարունակում էր բացատրել Աստծու հայտնության Խոսքերը և աշխատել հանուն մոլորակի վրա Չավատի ամուր հաստատման: Նրա մահից հինգ ու կես տարի հետո ամբողջ աշխարհի բահայիներն ընտրեցին Արդարության Չամաշխարհային Տունը՝ հաստատված Բահաուլլայի կողմից և մանրակրկիտ կերպով նկարագրված Աբդուլ-Քահայի և Պահապանի կողմից: Այժմ Արդարության Չամաշխարհային Տունը Չավատի գերագույն մարմին է և դրան են դիմում աշխարհի բոլոր բահայիները:

Ամեն կրոնի ամենակարևոր տեսակետն օրենքներն են, որոնք մարդկությանը բերում են Աստծու Չայտնությունը, որպեսզի մեզ ճիշտ ճանապարհի ուղղի:

Այդ օրենքներից ու կտակներից որոշը հավերժ են, իսկ որոշը փոխվում են առաջընթացի և մարդկության զարգացմանը զուգընթաց:

Բահաուլլան ասել է, որ այդ օրենքները պետք է դիտել ուղղակի որպես կարգադրագրերի և արգելքների ժողովածու: Նա ասում է, որ Իր պատգամներն **«Իմ սիրող նախախնամության կանթեղներն են Իմ ծառաների միջև և Իմ գթասրտության բանալիները Իմ արարածների համար»:**

Մենք պետք է դրանց ենթարկվենք ոչ պատժի առջև վախից, որովհետև Բահաուլլան ասել է. **«Պահպանեք Իմ պատգամները հանուն Իմ Գեղեցկության հանդեպ Սիրո»:**

Այդ մտքերը մեկի համար ավելի հասկանալի կդառնան, եթե բերվի բահայի օրենքների մի քանի օրինակ: Ֆիզիկական աշխարհում մենք՝ որպես մարդկային էակներ, պետք է ամեն օր սնվենք. դա է պահանջում մեր մարմնի առողջությունը: Եթե մենք այդպես չանենք, կհիվանդանանք և շուտով կմեռնենք: Այդպիսով, մենք կարող ենք ասել, որ կանոնավոր սնունդը մեր ֆիզիկական գոյության օրենքն է, և մենք պետք է դրան ենթարկվենք: Նման կերպ Բահաուլլայի պատգամներից մեկն այն է, որ մենք պետք է ամեն օր աղոթենք: Ինչպես և մարմինը, մեր հոգին մշտապես սնվելու կարիք ունի, և աղոթքը մեզ տալիս է այդպիսի էներգիա հոգևոր աճի համար: Կան շատ հիանալի աղոթքներ՝ հայտնած Բաբի, Բահաուլլայի և Աբդուլ-Քահայի կողմից, որոնք մենք կարող ենք կարդալ միայնակ կամ հանդիպումների ժամանակ: Այդ աղոթքներից որոշը նվիրված են կոնկրետ դեպքերին, և կան այսպես կոչված պարտադիր աղոթքներ, որոնցից մեկը պարտադիր պետք է ամեն օր կարդալ: Այդ աղոթքներից ամենահամառոտում ասվում է.



***Ես հավաստում եմ, որ իմ Աստված, որ դու ես ստեղծել ինձ, որպեսզի ես ճանաչեմ Զեզ և երկրպագեմ Զեզ: Հավաստում եմ սույն ժամին իմ տկարության և Զո հզորության մասին, իմ աղքատության և Զո առատության մասին: Չկա Աստված, բացի Զեզանից՝ վտանգի մեջ Օզնող, Ինքնագո:<sup>13</sup>***

Իր մեկ այլ պատգամում Բահաուլլան արգելում է չարախոսությունը և զրպարտությունը: Դա շատ կարևոր է, որովհետև եթե մտածես, միասնության չարագույն թշնամին հենց չարախոսությունն է: Եվ, դժբախտաբար, շատ մարդկանց մոտ սովորություն է առաջացել խոսել այլ մարդկանց սխալների մասին նրանց բացակայությամբ: Բոլորն անհանգստացած են ուրիշների վրիպումներով, որոնք մշտական հիշատակումից սկսում են ավելի ու ավելի մեծ թվալ: Արդուլ-Բահան մեզ խորհուրդ է տալիս վարվել ուղիղ հակառակ կերպով՝ եթե մենք որևէ մեկի մոտ տեսնում ենք տաս լավ հատկանիշ և մեկ վատ, մենք պետք է կենտրոնանանք տասի վրա և մոռանանք այդ մեկը, և անգամ եթե նրա մոտ տաս վատ հատկանիշներ են և մեկ լավը՝ մենք պետք է կենտրոնանանք այդ մեկի վրա: Բահաուլլան այսպես է ասում այդ մասին.

***Ով Իմ գահի մերձավոր, ականջ մի արա չարին և մի նկատիոր չարը, մի ստորացիր, մի մորմոքվիր և մի հառաչիր: Մի եղիր չարախոս, որպեսզի չլսես դու չար խոսքեր և մի չափազանցիր: Այլոց արատները, որպեսզի քո սեփական արատները մեծ չերևան, և մի ցանկացիր ոչ մեկին ստորացում, որպեսզի քո ստորացումը չդառնա ակնհայտ: Թող դու ապրես քո կյանքի օրերը, որոնք կարճ ակնթարթից էլ են կարճ, անարատ բանականությամբ, անբիծ սրտով, մաքուր մտքերով և անմեղ հոգով, որպեսզի ազատորեն և ուրախագին դեն գցես այս մահացու պատյանը, և վերադառնաս գաղտնախորհուրդ դրախտը, և ապրես անմահ թագավորությունում հավիտյանս հավիտենից:***

Չնայած ոմանց ալկոհոլի օգտագործման հարցը չի վերաբերում, բայց այստեղ հարկ է նշել, որ Բահաուլլան արգելում է ալկոհոլի օգտագործումը և իհարկե, թմրամոլությունը: Ալկոհոլի օգտագործումն ամենասարսափելի աղետներից մեկն է, որոնք գոյություն ունեն ժամանակակից աշխարհում: Դա բռնության և ընտանիքների քայքայման ամենահաճախակի պատճառն է: Ընդհանրապես հարց է ծագում թե ինչպես մարդիկ կարող են օգտագործել որևէ բան, որն ազդում է նրանց ուղեղի վրա և զրկում նրանց պարզ դատելու ունակությունից: Ալկոհոլը ստիպում է մարդկանց նվաստացուցիչ

վարմունք ցուցաբերել, չնայած մենք ստեղծվել ենք որպես վեհանձն էակներ: Բահաուլլայի մոտ մարդու վեհանձնության մասին այսպես է ասված.

*Ո՛վ Ոգու որդի: Ես քեզ ստեղծեցի հարուստ, ինչու՞ ես դու աղքատության մեջ ընկղմվում: Ես քեզ ստեղծեցի վեհանձն, ինչու՞վ ես դու քեզ նվաստացնում: Պիտելիքի էությունից ստեղծեցի ես քեզ, ինչու՞ ես դու ուրիշների մոտ գիտելիք փնտրում, Ինձանից բացի: Սիրո կավից կերտեցի ես քեզ, ինչպե՞ս ես դու զբաղված այլով: Հայացքդ քեզ ուղղիր և կտեսնես, թե ինչպես եմ ես կենում քո մեջ՝ ուժեղ, հզոր, ինքնագո:*

Բահաուլլայի մեկ այլ պատգամ ասում է ծնողների և հասարակության պարտավորությունների մասին, որ պետք է երեխաներին դաստիարակեն և կրթություն տան: Աբդուլ-Բահայի մի մեջբերում այս թեման շատ լավ է բացատրում.

*Այդ պատճառով Աստծու սիրեցյալները և Ողորմածի սպասավորուհիները պետք է ամբողջ սրտով ու հոգով նախապատրաստեն իրենց երեխաներին և նրանց դաստիարակեն առաքինությունների ու կատարելությունների դպրոցում: Նրանք չպետք է անփույթ լինեն այդ հարցում, նրանք չպետք է գործն ինքնահոսի թողնեն: Իսկապես, ավելի լավ է երեխան ընդահանրապես չապրի, քան թույլ տալ նրան մեծանալ տոգետ, քանզի այս անմեղ երեխան հետագայում կխոցվի բազմաթիվ թերություններով, ինչի համար Աստված ծնողներից խիստ հաշիվ կպահանջի, իսկ մարդիկ նրա վրա նախատինքներ կտեղան ու կվանեն: Որքա՞ն դա մեծ մեղք կլինի և որքա՞ն մեծ բացթողում:*

*Աստծու սիրեցյալների ու Պթասրտի սպասավորուհիների առաջին պարտականությունն այսպիսին է՝ բոլոր հնարավոր միջոցներով նրանք պետք է դաստիարակություն տան երկու սեռերին, ինչպես արական, այնպես էլ իգական, աղջիկներին այնպես, ինչպես տղաներին. նրանց միջև չկա ոչ մի տարբերություն: Եվ նրանց և մյուսների տգիտությունն արժանի է կշտամբանքի և երկու դեպքերում էլ կդատապարտվի: «Նրանք, ովքեր գիտեն և նրանք, ովքեր չգիտեն, միթե՞ նույնն են:»*

Այս կարևորագույն պատգամը ոգեվորում է բահայիներին շաբաթը մեկ անգամ անցկացնել մանկական դասարաններ: Այդ դասերին մասնակցում են բոլոր ցանկացողները:

Բահայի հավատը շատ կազմակերպված կրոն է, և դրա գլխավոր նպատակն է համախմբել ամբողջ մարդկությունը: Ահա որոշ օգտակար տեղեկություն բահայիների աշխատանքը նոր քաղաքակրթության կառուցման ուղղությամբ:

Ուղերձներից մեկում Արդարության Համաշխարհային Տունը ասում է, որ այդ գործընթացի մեջ ներգրավված են երեք մասնակիցներ և նրանցից յուրաքանչյուրն ունի իր կարևոր դերը:

Այդ գործընթացի մասնակիցներից առաջինն առանձին հավատացյալն է: Հատկապես նրա վրա է դրված լինել կայուն Կտակուն, մշտապես ձգտել սեփական կյանքը համաձայնեցնել Բահաուլլայի Ուսմունքների հետ և անընդհատ ծառայել մարդկությանը՝ հիշելով, որ կյանքը չի ավարտվում մահով և որ մեր փոխհարաբերություններն Աստծու հետ հավերժ են: Մահվանից հետո մեր հոգիներն ազատվում են և շարունակում հավերժ շարժվել առ Աստված: Մեր կյանքն այս աշխարհում շատ է հիշեցնում սաղմի կյանքը մոր արգանդում: Ինն ամսվա ընթացքում երեխան զարգացնում է իր ֆիզիկական օրգանները՝ աչքերը, ականջները, ձեռքերը և այլ, որպեսզի հետո օգտվի դրանցով այս աշխարհում: Նման կերպ մենք պետք է զարգացնենք այս աշխարհում մեր հոգևոր հատկանիշները, որոնք մեզ պետք կգան առաջընթացի համար գալիք աշխարհում: Իհարկե, մենք այդ նպատակին ենք հասնում ոչ թե նստելով ու այդ մասին մտորելով: Մենք պետք է աշխատենք, ծառայենք մեր մերձավորներին և կիսվենք նրանց հետ ձեռք բերված գիտելիքներով:

Գործընթացի երկրորդ մասնակիցը համայնքն է: Մարդկային էակները ստեղծվել են ոչ այն բանի համար, որ միայնակ ապրեն: Մենք ապրում ենք հասարակության մեջ և պետք է միասին աշխատենք, որպեսզի նոր քաղաքակրթություն կառուցենք: Մեզ համար ամենամոտ համայնքը տեղականն է՝ բաղկացած մեր գյուղի կամ քաղաքի բահայիներից: Հատկապես տեղական համայնքում ենք մենք սովորում իրար հետ հաղորդակցվել, համատեղ զարգանալ և սնուցել միասնություն: Բացի այդ, մենք նաև ազգային համայնքի անդամներ ենք, այնուհետև՝ համաշխարհային, որը մշտապես լայնանում է և լցվում ամենատարբեր ծագում ունեցող մարդկանցով՝ կրոնական, ազգային և ռասայական:

Ըստ Արդարության Համաշխարհային Տան՝ Հավատի Ինստիտուտները նոր քաղաքակրթության կառուցման երրորդ մասնակիցն են: Բահաուլլայի պատգամների մեջ կան շատ պատգամներ, որոնք վերաբերում են հասարակության կազմակերպման կառուցվածքին: Անցյալում Աստվածային Հայտնությունները գրեթե ոչինչ չէին ասում այն մասին, թե ինչպես Իրենց հետևորդները պետք է կազմակերպեն իրենք իրենց, և մարդիկ պետք է ինքնուրույն մտածեին որևէ կառուցվածք ստեղծել: Սակայն, ինչ վերաբերում է Բահայի Հավատին, ապա Բահաուլլան բերեց մարդկությանը նաև Իր Վարչական Կարգը, այսինքն, Նա մեզ ասաց, թե ինչպիսի ինստիտուտներ մարդկությունը պետք է ստեղծի, ինչպես դրանք պետք է գործեն և ինչպես մարդկությունը պետք է կառավարի իր գործերը:

Այստեղ արդեն նշվել էր Բահայի Հավատի գերագույն մարմնի՝ Արդարության Համաշխարհային Տան մասին: Բացի այդ, ամեն երկրում բահայիները տարին մեկ անգամ ընտրում են Ազգային Հոգևոր Ժողով, իսկ ամեն բնակավայրում՝ Տեղական Հոգևոր Ժողով: Բահայի Հավատում չկա հոգևորականություն, և համայնքի բոլոր գործերը կառավարում է Տեղական Հոգևոր Ժողովը՝ կանգնած որպես յուրաքանչյուր առանձին հավատացյալի շահերի պահպան:

Տեղական Հոգևոր Ժողովը բաղկացած է ինը հոգուց, որոնք ընտրվում են աղոթքի մթնոլորտում, գաղտնի քվեարկությամբ, համայնքի բոլոր հասուն հավատացյալների կողմից: Հոգևոր Ժողովները բահայիների համար ունեն բացարձակ կարևորություն: Հատկապես դրանց միջոցով են մենք սովորում այն, թե ինչպես պետք է կառավարել մարդկանց գործերը և ինչպես հասարակության մեջ կարող է հաստատվել նոր կարգ, որը հայտնի է որպես Բահաուլլայի Համաշխարհային Կարգ:

Բահաուլլայի կողմից հոգևոր հատկանիշների մասին հայտնած աղոթք.

*Ո՛վ Աստված, թարմացրու և ուրախացրու իմ ոգին: Մաքրիր իմ սիրտը: Բոցավառիր իմ ուժերը: Քեզ են վստահում իմ բոլոր գործերը: Դու ես իմ Վարողը և իմ Ապաստարանը: Չեն տխրի և չեն զղջա այլևս, այլ կդառնամ երջանիկ և ուրախ: Ո՛վ Աստված, ես էլ չեմ անհանգստանա և թույլ չեմ տա շփոթությանը հյուծել ինձ: Թող ես չընկղմվեմ կյանքի տհաճությունների մեջ:*

*Ո՛վ Աստված, Դու ինձ համար ավելի ես բարեկամ, քան ես ինքս ինձ համար: Քեզ են տրվում ես, Տեր:*

Բահայի համայնքը շարունակում է իրականացնել գործունեության հետևյալ ձևերը, որոնք բաց են բոլոր ցանկացողների համար:

## Աղոթքի հանդիպումներ

Բահայի համայնքում հավատացյալները հաճախ հանդիպում են տարբեր պատճառներով, սակայն կարևոր է հիշել, որ այդ հանդիպումներն իրենց էությունը հոգևոր են և օժտված են հոգևոր ներուժով:

*«Ցանկացած հանդիպում, որը կազմակերպվել է միասնության և համերաշխության ստեղծման նպատակով, կնպաստի, որ անձանոթները դառնան բարեկամներ, թշնամիներ՝ ընկերակիցներ, և Աբդուլ-Բահան ամբողջ սրտով և հոգով ներկա կլինի այդ հանդիպմանը»:*

*«Դու ուզում ես, ինչպես Մենք լսել ենք, որ ժամանակ առ ժամանակ քո տունը դառնա օրհնյալ հանդիպումների վայր, երբ բահայիները գովք կբարձրացնեն Ամենափառապանծ Տիրոջը ... Ուրեմն գիտցիր, որ եթե այս դու կատարես, քո երկրային տունը կդառնա երկնային կացարան, և այս քարե շենքը կդառնա ոգու անոթ»:*

Աբդուլ-Բահա

Այդպիսի հոգևոր հանդիպումների անցկացումը, որքան էլ դրանք սակավամարդ լինեն, մեծ օրհնանքներ են բերում հավատացյալների տներին:

## Մանկական դասարաններ

*«Մարդուն նայիր այնպես, ինչպես կնայես անգին փայլաքարերով լի հանքին: Միայն կրթությունը կարող է հանել այս գանձերը և օգնել մարդկությանը ծառայեցնել դրանք ի շահ իրեն»:*

Բահաուլլա

Մանկական դասարանների նպատակն է երեխայի բնավորության ամուր հիմք դնելը նաև օգնել երեխաներին զարգացնել այնպիսի հատկություններ, ինչպիսիք են արդարությունը, բարությունը, ճշմարտացիությունը, սովորեցնել համագործակցել ուրիշների հետ, ձեռք բերել գովելի վարք:

Այս ծրագիրը բաղկացած է տասնհինգ դասերից, որոնք անցկացվում են կանոնավորապես՝ շաբաթը մեկ անգամ:

Յուրաքանչյուր պարապմունքը բաղկացած է հինգ մասից՝ աղոթքների և մեջբերումների անգիր սովորելուց, երգեցողությունից, պատմվածքներից, խաղերից և նկարների գունազարդումից:

Մանկական դասարաններում մասնակցում են հինգից մինչև տասնմեկ տարեկան երեխաներ:

## Ուսուցման խմբակներ

Ռուհի ինստիտուտն ունի երկակի դեր՝ նպաստել հասարակության բարեկեցությանն ու ծաղկմանը, ինչին անհնարին է հասնել, քանի դեռ այդ հասարակության մեջ ապրող մարդիկ իրենք չեն սկսել փոխվել հոգեպես և ակտիվորեն չեն նպաստում իրենց շրջապատի բարեկեցությանը: Այդ դասընթացների մասնակիցներ են դառնում տասնհինգ տարեկանից բարձր մարդիկ:

Ներկայումս մեզ հասանելի է յոթ դասընթացներից բաղկացած հաջորդականությունը: Դասընթացների մասնակիցների էլ ավելի շատ գիտելիքներ ու հմտություններ ստանալուն և ծառայության նկատմամբ նրանց ընդունակությունների զարգանալուն զուգընթաց, այդ հաջորդականությունն աստիճանաբար բարդանում է:

Առաջին գիրքը կոչվում է «Մտորումներ ոգու կյանքի մասին», որտեղ մասնակիցներն ուսումնասիրում են իրենց ոգու բնույթը, մարդուն օժտված ունակությունները և առաքինությունները, որոնք նա կարող է դրսևորել առօրյա կյանքում և դրանով ազդել իր շրջապատի վրա: Նրանք մտորում են կյանքի իմաստի շուրջ և իրենց դերի մասին, հասկանում են, թե ինչ է աղոթքը և ինչ նշանակություն ունի այն մարդու կյանքում:

## Պատանհներին հոգևոր ուժ շնորհելու ծրագիր

Պատանհների խմբի գլխավոր խնդիրն է դրա անդամների փոխադարձ աջակցությանը մթնոլորտի ստեղծումը, ինչը կնպաստի հոգևոր ընկալման և մտածողության ու վարքի այնպիսի մոդելների զարգացմանը, որոնք ամբողջ կյանքում կլինեն նրանց բնորոշ գիծը:

Չանդիպումներն անցկացվում են ամեն շաբաթ, և պատանհներն ուսումնասիրում են այնպիսի նյութեր, որոնք հատուկ մշակվել էին տասներկուսից տասնհինգ տարեկան երեխաների տարբեր տարիքային խմբերի համար: Ուսուցումը զբաղեցնում է ժամանակի մի մասը, որը երիտասարդներն անցկացնում են միասին: Մնացած ժամանակ նրանք մասնակցում են գործունեության ստեղծագործական ձևերում, պլանավորում են ծառայության նախագծեր և զբաղվում սպորտով: Ի լրացումն ամեն շաբաթ անցկացվող պարապմունքների, խումբն այցելում է հատուկ միջոցառումներ և հավաքվում միասին ծառայություն իրականացնելու համար:



## Բահայի տաճարներ

Բահաուլլան Իր հետևորդներին թողել է կարգադրություններ՝ յուրաքանչյուր երկրում ու քաղաքում կառուցել տաճարներ աղոթքներ կատարելու համար: Այդ տաճարներին Նա տվեց «Մաշրիկուլ-Ազկար» անվանումը, որ նշանակում է «վայր, որտեղ ծագում է Աստծու Գովքը»:

Մաշրիկուլ-Ազկարն իրենից պետք է ներկայացնի ինը կողմանի շենք, որը պսակված է գմբեթով, և լինի հնարավորինս գեղեցիկ, ինչպես նախագծով, այնպես էլ կատարումով: Լավ է, եթե այն տեղակայված է շատրվաններով, ծառերով ու ծաղիկներով այգում և շրջապատված է շենքերով, որոնք նախատեսված են դաստիարակչական, բարեգործական և հասարակական նպատակների համար: Տաճարում պաշտամունքն Աստծուն պետք է միշտ սերտ կապված լինի բնությանը և մշակույթով ակնածությանը հիանալու, ինչպես նաև մարդկանց սոցիալական վիճակի լավացման հետ կապված պրակտիկ գործունեության հետ:

Ներկայումս աշխարհում գոյություն ունեն Բահայի յոթ տաճարներ: Դրանք կառուցված են յուրաքանչյուր մայրցամաքում: Այժմ Չիլիում կառուցվում է ութերորդ տաճարը:

“Միասնության վրանը բարձրացված է, միմյանց օտար մի  
համարեք: Դուք բոլորդ մի ծառի պտուղներ եք և  
մի ճյուղի տերևներ”:

Բահաուլլա